

ՄՇԵԿ

Տարեկան գինը 10 թուրքի, կին տարվան 6 թուրքի.
Առանձին համարները 5 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է լ է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)
Ծառայարարութիւնը ընդունւում է առանձին լիցիտով.
Ծառայարարութիւններէ համար վճարում են
Իւրաքանչիւր բանին 2 կոպեկով.
Տ է լ է Ք Օ Ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Ր Գ Ի Ր Գ Ի Ր Գ Ի Ր Ա Ր Ծ Ր ՈՒ Ն Ի

Կուրիայի ս. Աստուածածին Քանդողեան եկեղեցու երէցփոխը պատիւ ունի յայտնելու հայ հասարակութեան, որ կիրակի օր, ամսին 15-ին, ուղիղ ժամի 11-ին, հանգուցեալ

Թ Ա Ն Դ Ո Յ Ե Ա Ն Ն Ե Ր Ի

գերեզմանները վրա հոգեհանդիստ է կատարվելու:

1—1

ԲՈՎԱՆԿԱԿՈՒԹԻՒՆ

Նոր հիմնարկութիւն փոխառութեան համար.
—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բարձրագոյն Տեա-
գիւնք. Մամուլ. Նամակ Նուրա. գաւառից.
Նամակ Արաբաբաբից. Նամակ Խմբագրու-
թեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Լաբորի. Նամակ Ֆրանսիայից. Նամակ
Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐ-
ՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ:

ՆՈՐ ՀԻՄՆԱՐԳՈՒԹԻՒՆ ՓՈՒԱՌՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Սկզբունքով որոշված է և բարձր շըր-
ջանների հաւանութիւնն է ստացել մի
նոր հողային բանկի հաստատութիւնը Ան-
դրկովկասի մի այնպիսի նշանաւոր կէտում,
ինչպէս է Բազու քաղաքը: Մի քանի ամ-
սից յետոյ Բազուում կը բացվի քաղա-
քային կրեդիտային ընկերու-
թիւն, նման Թիֆլիսի նոյնանունակ ըն-
կերութեան, որի գործը պէտք է լինի,
գրաւ վերցնելով Բազու քաղաքի մէջ տը-
ներ և հողեր, ապ նրանց տերերին փո-
խարինարար յայտնի քանակութեամբ գու-
մարներ: Այսպիսի մի հիմնարկութեան
բացումը Բազուում շատ կարևոր էր, իսկ
Բազուի ներկայ հանգանակներում վերին
աստիճանի ժամանակակից և անհրաժեշտ
Պէտք է նկատել, որ Բազուի մէջ այժմ
սկսված է տներ շինելու մի տենդ. կա-
ռուցվում են բազմաթիւ տներ քաղաքի
թէ հին և թէ նոր մասերում: Նորոգվում
են եղած շինութիւնները, մի յարկանի
տները փոխարկվում են երկու և երեք
յարկանի տներով. իսկ այդ բոլորի համար
հարկաւոր եղած փողը հողացվում է կամ
պարտատի գումարներով, եթէ կան այդ-
պիսիները, և կամ մեծ մասամբ մասնաւոր
պարտքերի միջոցով, որոնք ձեռք են րե-
վում ծանր պայմաններով, վճարելով 10—
12 և աւելի տոկոս: Վերջին տարիները
Բազուի տանտէրերը սկսեցին զիմել Թիֆ-
լիսի աշխատանքութեան կալուածական
բանկին, որ գրաւ է վերցնում նոյնպէս և
տներ: Սակայն այդպիսի փոխառութիւն-
ները թիւը սահմանափակ է և բազուցի-
ները վաղուց սպասում էին ունենալու
իրանց քաղաքում յատուկ հիմնարկութիւն,
որ առանց դժուարութիւնների և արագ
կատարէր փոխառութիւն տալու գործո-
ղութիւնը:

Քաղաքային կրեդիտային ընկերութիւն
հաստատելը կալուածական բանկի նպա-
տակայարար ձևերից մէկն է: Այդտեղ
ընկերութիւն կազմողները նոյն տանտէ-
րերն են, որոնք փոխառութեան պէտք ու-
նեն, ուստի և ընկերութեան ստացած ու-
ւելորդ շահք պէտք է այս կամ այն ձևով
վերադառնայ տանտէրերին: Իրանց մաս-
նակցութեամբ ընտրած վարչական ան-
ձանց ձեռքով տանտէրերը կարող են կրե-
դիտային այդ հիմնարկութեանը տալ այն
բարեկարգ վիճակը, որ նրանց ցանկալի է:
Այդտեղ պաշտօնեաների վրա ծանրացած
է ընդհանուր ժողովի առաջ պատասխա-
նատուութիւնը իրանց բոլոր գործողու-
թիւնների համար:
Բազուի կրեդիտային ընկերութիւնը կը

տայ գումարներ՝ հաշուած 5 տոկոսի վրա
Ապագայում, երբ ընկերութիւնը խոր ար-
մատներ կը բռնի, կարելի է այդ տոկոսը
ընկերութեան վարչական ան-
ձինք, բարեկարգ վիճակի մէջ պահելով
ընկերութեան գործողութիւնները և զբոյժ
վերաբերելով դէպի տուած գրաւների
չափը: Ներկայումս, երբ Բազուում մեծ
գրամական կարտութեան մէջ է, քաղա-
քային կրեդիտային ընկերութեան հիմնելը
բաւարարութիւն կը տայ կարտողներին մի
մեծ խմբին և այդպիսով հրապարակ կը
հանէ արդիւնաբերութեան համար այն
գումարները, որոնք մասնաւոր պարտքերի
ձեռով կապված էին քաղաքի շինութիւն-
ների հետ:

Որքան մեզ յայտնի է, ընկերութիւնը
կը բացվի առաջիկայ ձմեռվայ սկզբին և
յունվարի 1-ից կը սկսի կանոնաւոր գոր-
ծունէութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՐՁՐԱԳՈՒՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«Արարատ» ամսագրում կարդում ենք.
«Քաղաքապետը Նորին Կայսերական Բարձրու-
թիւն Գեորգի Աղեքսանդրովիչի մահուան գոյժը
Մայր Աթոռ հասաւ հինգշաբթի, յուլիսի մէկին, և
իսկոյն Մայր տաճարի գանձակները տխուր հընչ-
մամբ հրաւիրեցին միաբանութեան և աղօթա-
բար հասարակութեան մասնակցելու ամբողջ
Ռուսաստանի սգոյն և Արքայազն Հանգուցեալի
հոգու համար այցելելու: Հոգեհանգստեան կար-
գը կատարուեցաւ Վեհափառ Հայրապետի ներ-
կայութեամբ, որ շտապեց իւր վշտակցութիւնը
յայտնել Նոյն Կայսերական Վեճութեան Թա-
գաւոր Կայսեր և Մայր Կայսրուհոյն, և ի պա-
տասխանի ստացաւ հետեւեալ հեռագիրները.

Ի՞նչպէս զգացուած եմ Ձեր Արքայութեան ջեր-
մալի աղօթքներով վաղաժամ վախճանուած Թա-
գաժառանգի հոգու հանգուցեան համար: Ի սրբ-
տէ չնորհակալ եմ Ձեզից և բոլոր հայոց եկե-
ղեցուց՝ արտայայտած վշտակցական զգացմանց
համար:
Ն Ի Կ Օ Ղ Մ Յ:

Ի՞նչպէս զգացուած եմ Ձեր կարեկցութեամբ
և աղօթքներով անկողնորէն չնորհակալ եմ:
Մ ար ի ա:

Վեհափառ Հայրապետի կողմից ուղղուած հեռա-
գիրն էր.

Ն օ Ր Ի Ն Կ յ ա յ Ե ր ա կ ա ն Մ Ե ծ ու Թ Ե ա ն
Թ ա գ աւ ո ր Կ ա յ Ե ր .

«Քաղաքապետը Գեորգիի մահուան խիստ
վշտակ գոյժը յանապիս տխրեցնց ինձ և
ամբողջ հայոց եկեղեցին: Խոնարհելով Ամե-
նաբարձրեալն անփոփոխելի նախաասմանու-
թեան առաջ, դառնապէս ողբում ենք հա-
րիւր միլիոնաւոր հաւատարիմ հպատակների
հետ այդ մեծագոյն կորուստը և, Միաձնի սե-
ղանի առաջ հոգեհանգիստ կատարելով՝ ամենա-
չեքեմանդն աղօթքներ ենք վեր առաքում՝
տալ Ձեր Վեճութեան ս. Հոգոյ մխիթարու-
թիւնը, թեթևացնելով Ձեր մեծ վիշտը: Եւ ի՞նչ
Ամենաողբումն Աստուած հանդուցանէ Գեորգի
թագաժառանգի հոգին, յաւիտենական կեանք
պարգևելով երկնից արքայութեան մէջ:
Նոյն բուխղանակութեամբ՝ Մայր Կայսրուհոյն:

Մ Ա Մ ՈՒ Լ

Այժմ, երբ գիւղական աշխատանքները վեր-
ջանում են, հաստատուակ կարելի է ասել, որ
մեր երկրի ազգաբնակչութեան վիճակված է
անցկացնել տնտեսական տագնապի մի ծանր
տարի: Բաւարար հունձ շատ քիչ տեղ է ստաց-
վել ընդհանրապէս ցանքերի մեծ մասը այդ-
վել ոչնչացել է երաշխոյ: Շատ տեղերում էլ
կարկուտ և հեղեղները ջարդեցին, սրբեցին
ամեն ինչ: Եւ ամեն տեղից գանդաւոր են գա-
լիս. կան այնպիսի տեղեր, որ ազգաբնակու-
թիւնը գոհ լինի. եթէ կան էլ, շատ քիչ են,
այնքան քիչ, որ չեն կարող փոփոխել ընդհա-
նուր պակասութեան պատկերը: Տագնապը սկսվել
է այժմից իսկ. հացահատիկների թանգութիւնը
զգալի է ամեն տեղ: Այս դեռ սկիզբն է, դեռ
մենք ամառվայ մէջ ենք գտնվում: Պէտք է դի-
մանալ մի ամբողջ տարի, պէտք է այդ դէպ
1900-ի հունձի վրա: Գրութիւնը պարզուր հա-
մար բաւական է յիշել, որ երաշխոյ գոհ է դար-
ձել մի այնպիսի հացաշատ երկիր, ինչպէս է
Սրբանան հասանգը: Ահա ինչպէս է նկարագ-
րում «НОВОЕ ОБОЗР.» լրագրի թղթակիցը այդ
հասանգի դրութիւնը:

Վերջին ժամանակ Սրբանի հրապարակում
ցորենի պուրը ծախվում է 1 թուրքի 30 կո-
պեկ—1 թ. 40 կոպ., գարու պուրը 60—70
կոպ., չոր խտրի պուրը 30—35 կոպ., յարկի
պուրը 20—25 կոպ.: Այս գները 1 1/2 անգամ
բարձր են այն գներին, որոնք գոյութիւն ու-
նեն անբերրութիւնից զնայած հարաւա-
րեւտեան Ռուսաստանում, և տեղական վա-
ճառականներին մի քանիսը հացահատիկներ
են բերել տալիս Օդեսայից և Նովորոսիյայից,
չը նայած որ ճանապարհածախս այդ տեղերից
մինչև Սրբան պէտք է տալ պուրկին 40—45
կոպեկ: Այս տխուր հանգամանքի պատճառը
չը տեսնված երաշխութիւնն է, որ տիրապե-
տում էր 3 ամբողջ ամիսների ընթացքում—
մայիսին, յունիսին և յուլիսին—և չը թողնց որ
հացաբոյսերը հասակ քաշեն: Չը նայած որ
գարնան սկիզբը հացաբոյսերի հասունացում
գեղեցիկ էր, շրթեր վերջ ի վերջոյ ուժամբափ
արին նրանց: Ծափարակներում և լեռնային
այնպիսի տեղերում, որ կարելի էր ջրել
ցանքերը, արհեստական ոռոգման միջոցով
կարելի եղաւ պահպանել հացաբոյսերի բնա-
կան հասակ քաշելը և այդ տեղերում լաւ,
մինչև անգամ շատ լաւ հունձ ստացվեց. մի
գեղեցիկից 80, 100, նոյն իսկ 120 պուր:
Բաւական է յիշել, որ Վարդարապատ գիւ-
ղում հունձի 1 1/2 մասը, որ ստանում է վան-
քը, այս տարի հաշուում է 500—550 խալվար
(15,000—16,000 պուր), մինչդեռ սովորա-
կան տարիներում Վարդարապատ տալիս է
վանքին 200—300 (6000—9000 պուր) խալ-
վարից ոչ աւել:

Բայց ուրիշ տեսարան են ներկայացնում
լեռնային մասերը:

Նոր-Բայազետի, Աղեքսանդրոպոլի գաւառ-
ներում, Աքարանում և ուրիշ տեղերում, չը
նայած հիւսիսային զով քամիներին, որոնք փը-
լում են պարբերաբար, հացաբոյսերը 6—8,
մինչև իսկ 4 վերջոյից աւել չը բարձրացան.
միջին հաշուով մի գեղեցիկից 30—35 պու-
րից աւել չը տուել, թէ և շատ գիւղերում չեն
վերցրել նոյն իսկ 20, 10 պուր, մինչև ան-
գամ սեղմը: Հացաշատութեամբ հոչակված
Սրբապոլը, որի հնձի 1/2 մասը էլ միաձնեցի-
ները վանքից սովորաբար վերցնում էին 300
—400 խալվարով, այս տարի 50 խալվար էլ
չի տալ:

Սեղ է դէպք, որ 3 խալվար ցանողը ստա-
ցել է 1/2 խալվար հունձ: Եւ այսպէս շատ տե-
ղերում: Բայց ամենադժուար բանը անասունե-
րի ապուրն է: Յարկը ու խտրի գները բարձրա-
նում են ոչ թէ օրերով, այլ ժամերով: Սեճե-
նովկա գիւղում սովորաբար չոր խտրը ծախվում
էր 15—10 կոպեկով, այժմ 70 կոպեկ արժէ:
Գիւղացիները սարսափի մէջ են թէ ինչ կը
լինի ձմեռը, և այժմից իսկ աշխատում են
նշչին գներով ձեռք բերել իրանց անասուն-
ներին: Մի լաւ կովը, որ արժէ 20—30 թուր-
քի, այս օրէին կարելի է ձեռք բերել 7—10
թուրքով: Միայն Նոր-Բայազետում ծախվում է
տակաւայից ցած. ոչխարի միսը արժէ 4 կո-
պեկ, փոխանակ նշանակված 5 կոպեկի: Եթէ
այս բոլոր վրա աւելացնենք այն, որ գետերի
ջուրը սաստիկ պակասել է և ոռոգման պա-
կասութիւնից բրինձի և բամբակի շատ ցանք-

ներ են փչացել, իսկ խաղողը և այլիները
շատ վնասվել են, մեր նահանգի տեսարանը
կը ներկայանայ շատ անմխիթար դրութեան մէջ:

Սրբանան հասանգի այս տագնապը ընդհա-
նուր է և մեր երկրի շատ տեղերում: Այսպէս,
յայտնի է, որ Գանձակի և Բազուի նահանգների
ամենամեծ մասն էլ այրվել է երաշխոյ. Վրաս-
տանը սարսափելի վնասներ է կրել կարկուտից,
այնտեղ էլ չը կայ բաւարար հունձ, այնտեղ էլ
գիւղացուս սպասում է ծայրայեղ պակասու-
թիւն: Չը պէտք է մոռանալ մասնաւոր այն
խոշոր հանգամանքը, որ այսպիսի մեծ դժբախ-
տութիւնը պիտի տանէ մի ազգաբնակչութիւն,
որ վերջին մի շաբա տարիներում էլ ենթարկ-
ված է եղել թանգութեան, պակասութեան, հե-
տաւարար չունի բարեկարգ տնտեսութիւն, չունի
ոյժ, որ առանց մեծ տանջանքների կարողանայ
զիմանալ ներկայ տարվայ անբերրութեան:
Մեր առջև, այս ամառվայ վերջում, մի երկիր
է, որ արդէն բաւականաչափ թուլացած է, արն-
տեսապէս մայրը, որ յոյս ունի որ այս տար-
վայ հունձի վրա, բայց յոյսի փոխարէն կատա-
րեալ յուսահատութիւն ստացաւ: Ինչն ըստ
ինքեան հակահայր է որ այժմ, աւելի բան
անցեալ տարիներում, հարկաւոր է օգնել
ազգաբնակչութեան, հարկաւոր է օգնել ժա-
մանակին, քանի որ դժբախտութեան սկզբուն-
նեք, քանի որ չեն եկել ցուրտ ժամանակները,
երբ կարող ժողովրդի տանջանքները պիտի կըրկ-
նապատկվեն: Որոշ տեղերի վիճակը մեզ ձեռ
չը կան: Եթէ մի որ և է տեղից մի պատահա-
կան թղթակցութիւն կը տպվի մի լրագրում,
մենք մի թեթիւ հասկացողութիւն կը կազմենք
կարտութեան մասին, եթէ չի լինի ոչինչ տե-
ղեկութիւն, մենք հանդիստ կը նստենք մեր
տեղը և երբէք չենք անցկացնի մեր մտքով, որ
մեր երկիրը հազարաւոր ցաւեր ունի, բայց
գուրկ է լեզուից՝ այդ ցաւերը արտայայտելու
համար. եթէ նա լուռ է, այդ չէ նշանակում
թէ նա գոհ է, այլ միայն այն, որ նա համբ է:
Գիւղերում պատրաստված մարդիկ չը կան, որ
իմացնեն հասարակութեան թէ ինչքան մեծ է
կարիքը. գաւառական սակաւաթիւ ինտելի-
գենցիան միանգամայն անընդունակ է իր պար-
տաւորութիւնները հասկանալու: Եւ ահա մենք
այս գուշակում ենք—քանի որ չոր ու տաք ե-
ղանակներ են, ամեն տեղ կը տիրէ լուռութիւն,
իսկ երբ կը գայ ձմեռը, երբ ազգաբնակչու-
նը հազարաւոր ցնցոյ տեսարաններ կը հանէ լոյս
աշխարհ, միայն այն ժամանակ մենք կը սխախ-
վենք մեզ յատուկ թմրութիւնից և կոպեկներ
կը տանք մեր պարտաճանաչութիւնը ցոյց տա-
լու համար: Բայց այն ժամանակ շատ ուշ կը
լինի և մեր կոպեկները չեն կարող ամբողջ լա-
նատարած զգրախոսութիւնը: Կատարով միայն
այն հանգամանքից, որ ամբողջ Անդրկովկա-
սում մասնաւոր կարելի է համարել մեծ վնաս-
ների չենթարկված տեղերը, մենք պիտի երևա-
կայնք թէ որքան մեծ պիտի լինի ընդհանուր
զգրախոսութիւնը, որ ցուրտ ժամանակներին է
սպասում: Գնցող տեսարաններով հանդէս գա-
լու համար: Եւ սակայն որքան մեղմութիւններ
կարելի էր մտցնել այդ տանջանքները մէջ,
և թէ մենք այժմից սկսենք օգնութեան գործը:
Ռուսաստանի հարաւային մի քանի նահանգնե-
րում էլ այս տարի փչացել է հունձը. դառն
փորձերից խրատված ինտելիգենցիան և գաւառ-
ական հիմնարկութիւնները այժմից իսկ սկսել
են միջոցներ որոնել՝ ազգաբնակչութեան օգնե-
լու համար: Իսկ մենք լուռ ու անգործ ենք,
մեր արեան մէջ կայ այն գուշակ յատկութիւնը,
որ մինչև որ սովատանջ արքատը չը ձեռ է մեր
գուռը և ցոյց չը տայ իր սարսափելի ցնցոտի-
ները, մենք տեղից չենք շարժվել և ոչ մի բան
չենք անի: Բայց մինչև երբ պիտի գերի մնանք
այս ասիական անհոգութեան, այսպիսի դրութի
հասկացողութեան ձեռքում...

ՆԱՄԱԿ ՆՈՒԹՈՒ ԳԱՒԱՌԻՑ

Կուրիային գիւղ, օգոստոսի 8-ին
Այս տարի համարեա թէ ամբողջ Անդրկով-

կատուս ու մասնաւորապէս Գանձակի գաւառում անձրևներ եղան միայն գարնան սկզբին, իսկ յետոյ և ամբողջ ամառը անցաւ առանց մի կաթիլ անձրևի, ուստի սաստիկ երաշտութիւնից վնասվեցին բոլոր ցանքերը, հացահատիկները, չալթուկները, այգիները, բոստանները և խոտերը: Կան գաւառներ, որտեղ գիւղացիք չունենալով խոտ, ստիպված են անասունները մի քանի քանակ շատ չնչին գնով մինչև անգամ այս տարի ելլալներում աղբիւրները ջուրը կտրվել և սակաւացել է, իսկ խոտերը մեծածախնութեամբ վառ և կարճահասակ են, ինչպէս, օրինակ, Ղազարի գաւառում: Նույն գաւառը ևս այս տարի մեծ վնասներ կրեց երաշտութիւնից և ջրի պակասութիւնից և շատ գիւղացիք իրանց չալթուկները անասուններին ուտեցրին, ինչպէս, օրինակ, Քիւտայի գիւղում և նրա շրջակայքում:

Անձրևի կարոտ էր ամբողջ նահանգը և, ի միջի այլոց, Կուտկաշէնի գիւղը, որի ցանքերը նոյնպէս վնասվում էին: Այստեղ, յուլիսի 27-ին երեկոյան, մօտ ժամը 6—7-ին, ժողովուրդը սաստիկ ուրախացաւ, երբ երկինքը պատեցին սև ամպեր և լսվեց նրանց գոռու-գոչումը ու անձրևի կաթիլները սկսեցին ջրել ձարաւ գիւղի շրջակայքը: Հազիւ էր դադարել անձրևը, որ ժողովուրդը գետակը, Վառլի արտաբեր, սկսեց ոչ պակաս ամպերից գոռու գոչումով վազել: Գիւղացիք ուրախացած, վազեցին նայել ջրի յորդ նահանգին, որին նրանք անհամբեր սպասում էին:

Կուտկաշէնցիք հազիւ էին հասել գետի ափը, երբ նրանց առաջ բացվում է մի զարհուրելի տեսարան. նրանք տեսնում են, որ մի բոլորով անբողբ գետակը լցվեց ջրով և սև ցեխով ու անհզին բարձրով, որոնց ձայնից ականջ էր լսւում: Գիւղը, կամ աւելի լաւ ասած՝ ցեխանման հոսանքը դուրս գալով ափերից՝ սկսեց մօտենալ նրանց ու հոսել դէպի գիւղը: Քիւղացիք ահից իրանց կորցնելով՝ սկսեցին փախչել դէպի գիւղ՝ կանչելով «ով կարող է թող աղակաւ լինի, բայց նրանք չը կարողացան հասնել իրանց տները, քանի որ նոսանքը ահաբեկի, անգուժ զազանի նման իր ճանկերը բացած՝ պատրաստ էր նրանց կլանելու, ուստի ձարահասած նրանք, կորցնելով իրանց զլրարկ ունեւանները՝ մի կերպ կարողացան բարձրանալ մօտակայ առաջին ձառեղի վրա, որտեղ և մնացին ամբողջ գիշերը: Միւս գիւղացիք տեսնելով անկոչ հիւրը—կործանիչ հոսանքը մօտենալը, խելագարի նման ամեն ինչ թողնելով փախչում են մօտակայ բարձր տեղերը և բերդների վրա:

Ընկերացիները կարող են երևայակալել գիւղացիների ահ ու սարսափը, երբ տեսնում են թէ ինչպէս ամբողջ 1/2 վերստացած տարածութեան վրա անհզին բարձրութեամբ—մօտ 3—4 սաժէն—ջուրը վազում է դէպի իրանց բնակարանները և այգիները, գլորելով 600—1000 պոլս ծանրութեամբ քարեր, ամպայնելով ամեն ինչ և կործանելով տներ և այգեստանը: Քրտիկները կորցրած խեղճներ անդոր են որ և լցեց օգնութիւն հասցնել և աղափել իրանց ունեցածը: Յորդ հոսանքը տեսնել է մօտաւորապէս 3—4 ժամ, որից յետոյ սկսում է նուազել, իսկ այդ կարճ միջոցում բոլորովին քանդում և անհետացնում է 15 տուն իր բոլոր ունեցածներով և վնասում է մօտ 70—80 տուն, իսկ անասունները թիւը դեռ որոշված չէ: Ինչ ասել կուզէ, որ ցեխանման հոսանքը բոլորովին ոչնչացրել է իր պատահած բոլոր այգիները: Մարդ ապշած մնում է տեսնելով թէ ինչ ոյժ է ունեցել հոսանքը, որը սարից գլորել է համարեա թէ ամբողջ բլուրներ, քարեր, ամեն մէկը 2—3 սաժէն բարձրութեամբ և 2—3 սաժէն լայնութեամբ: Ի հարկէ այդ քարերը, ինչ որ պատահել է իրանց ճանապարհին, բոլորը ջարդել և ոչնչացրել են:

Անցքի մասին իսկոյն յայտնեցին Նուխու գաւառապետին, որը հեռագրով յայտնելով Գանձակի նահանգապետին, ինքն շտապեց Կուտկաշէն գիւղը, վերցնելով իր հետ ձարտարապետին (ИЖЕНЕРЪ-ГЛАВЛАНКЪ), որ մի օգնութիւն հասցնէ ժողովրդին և մխիթարէ ու քաջաբերէ նրան: Պ. Նահանգապետը, ստանալով հեռագիրը, ինքն ևս անձամբ գնաց աղէտի տեղը տեսնելու, և ինչ զարհուրելի տեսարանի ակնատեսն եղաւ. նստած ձիու վրա ձեռքի ձորակը բարձրացնում էր, բայց էլի չէր կարողանում հասնել այն բարձրութեան, որտեղից հոսանքը անցնելով թողել է հեռքերը:

Կուտկաշէն գիւղը, որը Նուխի գաւառում, կարելի է ասած, համարեա թէ գիւղաքաղաք է և ունէր փոքր ի շատէ գրաւիչ տեսարան, պահանջապետին այժմս երեսը իբրև մի ամալի տեղ: Այստեղ, որտեղ առաջ գիւղի գրօնները

տեղն էր և լաւ փողոցը, այժմ մի սաժէն խորութեամբ առու է ընկած և այստեղ այնտեղ երևում են մերկ ձառերը ու անհզին քարերը: Քիւղացիք աղբրախնդրով գիտեցին պ. նահանգապետին օգնութիւն խնդրելով. նա կարճ, բայց աղբու խօսքերով պատեց աղետի իսկական պատճառը և խոտափառ միջնորդել օգնութեան ժամին:

Հոտանքը, ինչպէս յայտնի դարձաւ, սկսվել է ՎՇիխա ձորից, Կուտկաշէնի մօտ. այդտեղից հոսանքը քրօմ ամուսն է կրօն գիւղի լեզգիներից հինգ հողի և նրանց անասունները: Կրօնցիք ապրում են այդ ելլալներում և պարագում անասնապահութեամբ. յետոյ հասնելով Լազա գիւղը՝ քար ու քանդ է անում մի անհզին ջրաղաց, ըսում տանում է 400 ոչխար մօտ 60—70 զրուս մեծ անասուններ, անցնելով հասնում է Կուտկաշէն գիւղը և համարեա թէ ամպայնելով՝ անցնում է միւս գիւղերը: Կուտկաշէն գիւղից հոսանքին չոճ է գնում միայն մի կին և վնասվել են հետեւեալ գիւղերը՝ Վանդա, Քիւտայի, Նովուր-Վիշաղ, Քուտկաշէն, Քուտկաշէն և այլն: Միայն Կուտկաշէն գիւղի վնասը հասնում է 25,000—30,000 ռուբլու: Ինչպէս պատմում են, այսպիսի և աւելի վատ աղէտ սպասում է Նուխի քաղաքին:

Ականատես

ՆԱՄԱԿ ԱՍՍԷՔԱԿԱՔԻՑ

Օգոստոսի 2-ին Տիրահոշակ Սանդաձէները էլի գլուխ են բարձրացրել: Ինչպէս յայտնի է, այդ հարուստ կապալառուները, Քօրծօմի կարուածքին պատկանող խոտատեղիները կապալով վերցնելով՝ տալիս են այս և այն գիւղին, ամեն մէկին իրանց սրտի ուզած պայմանները թելադրելով: Բեժանօ կամ ձանձղ գիւղը ընդհանուր երաշխաւորութեամբ (крупная поручка) պարտաւորվել է ամբողջ վճարը (կարծեմ 1500 ռ.) տալ մինչև խոտի կրելը, իսկ եթէ մի կօպէկ անգամ պատկաւ լինի, Սանդաձէն իրաւունք ունի կրելի կրելի արգելելու: Հիւսա բոլոր գիւղացիները իրանց բաժինը վճարել են, բացի Սանդաձէների ը արեկ ամեն րէից մէկը, որն իր բաժինը, մօտաւորապէս 70 ռ., չէ վճարել դեռ: Սանդաձէն մանչակը էլ չէր այդ էր պէտքը, և անա նրանք առաջ են գալիս իրանց այնքան ձեռնուտ պայմաններից օգտվելու մօտ 10 օր է, որ նրանք արգելել են ձանձղացիների մի քանի տանեակ սայլերը, և ոչ խոտն են տալիս, ոչ էլ սայլերը: Իս, ի հարկէ, դաշտային աշխատանքների այս եռուս ժամանակը, անասելի վնաս է հասցնում գիւղացուն, և ծուղակն ընկած մեր գիւղացին դէս է ընկնում, դէն է ընկնում և ոչինչ չէ կարողանում շինել, որովհետև պայմանն այնպէս է, «Արտթիկ-աղան» իրաւունք ունի: Գիւղում են պրիտաւին, նա ասում է, թէ ձեռ սայլերը իմ ըրջանից դուրս են արգելված, դիմեցէք Քօրծօմ, բայց գիւղացին չէ կարողանում Քօրծօմ դիմել, հեռու է. և անա մեր քաղաքները՝ շարունակում են օգտվել վարչական կենտրոններից կարված լինելուց, և գիւղացու անձար և տղէտ լինելուց:

Սակայն գիտունն էլ նրանց դէմ ոչինչ է. արգելված սայլերից մէկը պատկանում է մի յայտնի ինտելիգենտ երևուստարդին, որը նոր է վերադարձել Եվրոպայից՝ փրիսոփայական կանդիդատի կոչումով. բայց արգելանքն ոչ մի փրիսոփայական սկզբունք չեն ընդունում, հրացանների փողբերից բռնած՝ շարունակում են իրանց ուղղական գիրքը և սայլերի պաշարումը... Ինտելիգենտ երևուստարդը, գէթ ապագայում Սանդաձէներից աղատ մնալու համար, դիմում է իր գիւղացի կրթութիւնը, թէ գնանք Քօրծօմ և կարուածքը վարչութիւնից անմիջապէս կապալով վերցնենք արտատեղիները, աւելի ձեռնուտ պայմաններով, մասնաւորապէս որ այդ վարչութիւնը վերջերս պաշտօնապէս յայտարարել է, որ պատրաստ է սարբեր աւելի շուտ գիւղական համայնքներին տալով՝ քան թէ մասնաւոր անասնապետին. բայց հնարաւոր բան է, որ մեր աղայապաշտ գիւղացին իր աղայի փեշը բաց թողնէ և աւելի լաւ ապրէ. ինչպէս կարելի է առանց կապալառու աղային ապրել վերջապէս, չէ որ աղան քե եր ամ աղ կը լինի... Եւ մեր աղան, բեխները ուրբերով, խզճի՛ ձայնի մի տարբերակ երաժշտութեամբ, շարունակում է օգտվել ոչ միայն պայմաններից, «Իրաւունքից», ինչպէս ներկայ հանդամանքում, այլ և գիւղացու երաւարանական գիտակցութիւնից զուրկ և ստրուկ լինելուց, իր տնտեսական և նոյն իսկ աշխարհագրական գիւղի ընթացքը... Ինչ կասեն այս այլանդակ երեկոյն վերաբերմամբ մեր խելօքները: Ամբթ այսպիսի «աղա-

ներին», ամբթ ստրուկ և շողբորթ գիւղացուն, ամբթ նաև այս բոլորը տեսնող և անտարբեր կերպով լսողին: Սալլի մեան

ՆԱՄԱԿ ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ

Նոր-Նախիջևան, օգոստոսի 7-ին Առ 1 յուլիսի Ռ. Պատկանեանի մահարձանի գումարն էր՝ 2010 ռուբլի 25 կօպէկ: Ստացանք Կարասու-Քաղարից, պ. Կ. Բարոնեանից 5 ռուբլի և Ղուբայից, պ. Սալաթէկեանի միջնորդութեամբ, 20 ռուբլի հետեւեալ պարոնների նուէրները՝ Ամիրխանեանի, Ն. Սարուսեանի, Ս. Շահիջանեանի, Խաչատուրեանի, Մեքքոն Սալաթէկեանի (երկ-երկու ռուբլի) և Ղասաբեանի, Նազարեանի, Շահնազարեանի, Սալաթէկեանի, տիկին Սափարեանի, օր. Գոյվաթեանի, օր. Սափարեանի (մէկ ռուբլի): Ուրեմն առ 7 օգոստոսի մեր մօտը կը լինի 2035 ռուբլի 25 կօպէկ: Խոնարհարար խնդրում ենք մեր անձա՛ք բանաստեղծի յիշատակը յարգողներէրց աջակցել մեզ գլուխ կանգնեցնել այս գործը: Նուէրները շարունակում ենք ընդունել (Нахичевань на Дону, Грнорію Чалхушьяну):

Ի դէպ յիշե՛ք, որ սոյն ամսի 22-ին կը լրանայ Փաճառ-Փաթիլայի մահանկեալ Եօթերորդ տարեգարձը, որը գոյցէ աւելի կը տայ նա հասարակութեան գէթ համեստ կատարել իր պարտքը, ուղարկելով իր լուծման յօդու ազգային երգչի մահարձանին:

Քր. Չալիուշեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Շատ երիտասարդներ և օրիորդներ, որոնք ունեն տնային վարժապետի և վարժուհու իրաւունք, շատ անգամ չեն վերցնում վկայականներ և յետոյ անհրաժեշտութիւնը պահանջած ժամանակն են դիմում ուսումնական վարչութեան, խնդրելով ուսուցչական վկայականներ: Ուսումնական վարչութիւնները մի քանի տեղերում մերժել են տալ վկայականներ, առարկելով, որ այդ վկայականները պէտք է վերցվին իրանց ժամանակին: Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը այժմ բացատրել է, որ վկայականներ տալու համար ժամանակը ոչ մի դեր չը պէտք է կատարի:

Ս. Պետրբուրգի բօրանք ընդունեց «Կասպիական խողովակաճեղ» ընկերութեան բաժնեթղթերը առուծախի համար: Ինչպէս յայտնի է, այդ ընկերութիւնը կազմվեց երկու տարի սրանից առաջ 600,000 ռուբլի դրամադրելով, որին աւելացաւ նորերս 400,000 ռուբլի և այդպիսով կազմվեց մէկ միլիոն ռուբլու հիմնական դրամադրութիւն: Անցեալ 1898 թիւն բաժնետէրերը ստացան դուտ արդիւնք 14%: Ընկերութեան նպատակն է ջուր մատակարարել Բազուի նաւթահանքերին և առհասարակ կազմակերպել ջրանցք շինելու գործը:

Թիֆլիսի ոստիկանութեան կարգադրութեամբ կորտուս են քաղաքի մէջ եղած այն շինքին, որոնք անտէր են, թափառում են տնից տուն և անհանգստութիւն պատճառում աղքատակութեան: Ենթ բռնելու համար գործ են անում ցանցեր, իսկ տեղափոխելու համար յատուկ կառուցք, յարմարեցրած այդ գործի համար:

Պաշտօնապէս յայտարարվել է, որ Թիֆլիսում թող է տրվում հիմնել նաւթագործական ընկերութիւն 750,000 ռուբլի հիմնական դրամադրելով, բաժնեվճար 3000 ակցիայի, իւրաքանչիւրը 250 ռուբլի արժողութեամբ: Ընկերութեան վարչութիւնը պէտք է գտնվի Թիֆլիսում: Ընկերութեան տնտեսն է «Թիֆլիսի ակցիոնեռական նաւթագործական ընկերութիւն» (Тифлисское акционерное нефтепромышленное общество):

ԱՍՏԻՄԻՑ մեզ գրում են.

Էրէկ Ֆրանսիական նաւով Թիւրքիայից եկած յոյները պատմեցին, թէ թիւրք կառավարութիւնը հայերին արգելում է նաև իր հողից դէպի այս կողմեր անցնելու: Թէև այդ մասին դեռ ևս հաստատ տեղեկութիւն չը կայ, բայց և այնպէս այդ լուրը հաստատվում է աւելի նրանով, որ Տրապիզոնից երէկվայ եկած շրջանաւոր ոչ մի հայ չեկաւ, մինչդեռ այստեղ շատերն էին սպասում իրանց ազգակիցներին: Այդ լուրը մեծ տարակուսանքի մէջ գցեց այստեղի թիւրքահայերին, որովհետև շատ ընտանիքներ անդամներ մի մասը այստեղ է ապրում, իսկ միւս մասը Թիւրքիա Թիւրքերի մէջ լուր է պտտում, որ իբր թէ այդ կարգադրութիւնը կը տեղի միայն մինչև օգոստոսի 19-ը. այդ օրը սուլթանի ծննդեան օրն է (Ճիւլիսի-Հիւսյուն), ուստի հաւանական են համարում, որ այդ օրը սուլթանը յետ վերցնի իր այդ հրամանը՝ ազատութիւն շնորհելով հայերին՝ կանոնաւոր անցադրելով երթևեկելու իր և ուսուց 5ողի մէջը:

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Ճեղիս հայ-կաթօրիկ համայնքը ոչնչել է սիրով ու գիտակցօրէն վերաբերվել դէպի ուսումը և ուսումնարանը: Արդէն ուսումնարանի շէնքը պատրաստ է, որտեղ կառուց են 50 մանուկներ տեղադրվել: Աւուրցիներ արդէն վարձված են և կանոնաւոր դասատուութիւնը սկսվելու է սեպտեմբերին»:

ՉԱՐՔԱԹԼՈՒԻՑ մեզ գրում են. «Չարդախուրն երկար ժամանակ է, որ հողի վէճ ունէր հարեան թուրք գիւղերի և բէկէրի հետ: 1898 թիւն այդ վիճելի հողերի կէսը վճովեց յօդու մեր գիւղի, իսկ կէսը յօդու գանձարանի, որը (միւս կէսը) կրկին գիւղացիները վերցրին աճուրդով: Այս բանի վրէժը թուրքերը ուզում են գողութիւնով առնել. օգոստոսի 2-ին նրանք յափշտակել են մեր գիւղից մի գոթման, իսկ մի ուրիշ գոթմանից գողացել են մի եղբւր»:

ՄԵՂՐԻՑ մեզ գրում են. «Այս տարի մեր գիւղի բօժօրի (Կօկօն) բերքը միջակից աւելի եղաւ և սպասածից աւելի գնով վաճառվեց, այն է 16 ռուբլի: Բամբակի բերքը այս տարի լաւ չէ, մասնաւորապէս ամերիկական տեսակները, որից վերջին տարիներս սակաւ են ցանում, որովհետև այլ ևս չէ դիմանում շոքը և անփաթէ կոչված հիւանդութիւններին: Գիւղացիք ցանում են զարագազա կոչված տեսակը, որից միշտ միջակ հունձ է սպասվում, եթէ ոչ աւելի, և վերև յիշած հիւանդութիւնները շատ էլ չեն կարողանում աղբեր: Լաւ չէ այս տարի և խաղողի բերքը՝ չնորհիւ ընթաց սասուած հիւանդութեան, որը վարակել է այգիները մեծ մասը: Երաշտը սաստիկ էր. դեռ Մեղրին ջրառատ է, այնպէս որ բուսականութիւնը այնքան էլ չէ կարող վնասվել, բայց սաստիկ վնասվեցին արտատեղերը: Իսկ շրջակայ, առանց այն էլ աղքատ գիւղերը անլըղի լինելով, բոլորովին վնասեցին: Բանջարանայնները և սեխի տափաստանները չորացել են, ձառերի տերևները թափվում են, աշնանային պտուղներից՝ մի քանի տեսակները սաստիկ չորից խակ-խակ թափվում են, կարծես աշուն լինի: Ցորենի հունձը թէև միջակից բարձր է, բայց գոյներն էլ բարձր են, այն է՝ 1 ռ. 50 և 1 ռ. 60 կ. պողպը, որ շատ ծանր է լինելու ցորեն գնող գիւղացու համար: Մեղրիի հասարակութիւնը անցեալ տարվայ նման մտադրել է այլ կողմերից ցորեն բերել մտալ, հասարակութեան հաշուով, և վաճառել ժողովրդին: Բայց արաւելի է նստում և աղքատ դասակարգը հնար է ունենում ձեռքից փող եղած ժամանակ իր համար ցորեն գնելու»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Լ Ա Ք Օ Ր Ի

Հոշակաւոր փաստաբան Լաբօրի, որ պաշտպանում է Իրէյֆօսին միւս հոշակաւոր փաստաբան Ռեմանիկի հետ, ինչպէս յայտնի է, գո՛հ դարձաւ մի զգուշելի դատարութեան, որի նպատակն էր, անշուշտ, գրկել Իրէյֆօսին այդպիսի մի տաղանդաւոր պաշտպանից: Յայտնի է, որ այդ փորձը չափողվեց, և Լաբօրի դարձաւ Բէնիի դատարանում և և շարունակում է իր գործը: Լաբօրիները լքել են Լաբօրիի դէմ բրած սպանութեան փորձի մանրամասնութիւններով: Բերում ենք մի քանիսը «НОВОСТІ» լրագրի ստացած թղթակցութիւնից:

Լաբօրի կինը չէր առաջին վարկեանից ցոյց տուց մի դարձանայ կորով և քաղութիւն: 30 ժամ շարունակ նա չէր հեռանում իր վիրաւոր ամուսնու մահճակալից: Լաբօրին, երբ ընկած էր փողոցում, ասաց անցորդներից մէկին. «Ես Լաբօրին եմ, կինս վաղեց օգնութիւն կանչելու, եթէ ինձ կենդանի չը գտնէ, ասացե՛ք նրանց, որ մի վերջին մտածուճքը նրա մասին էր»։—«Լաւ, կասե՛՛ք, պատասխանեց անցորդը և անհետացաւ: Լաբօրին ինքն է պատմում այս բանը: Երբ կինը վաղեց բերելով օգնութիւն և արտասուճք թափելով բունքը նրա գլուխը, որ տեսնէ թէ կենդանի է նա, որովհետև նա անշարժ ընկած էր, Լաբօրին թեքեց իր գլուխը դէպի նրա ոտները, մեծ դժուարութեամբ ջանք արաւ, բունքը նրա ձեռքը և ասաց. «Այժմ ես լաւ եմ, դու ինձ հետ ես: Ծանր նա ամբողջ ժամանակ խոսում էր գործի մասին:—«Մարդասպաններ—միթէ սա էլ հրամանով էր: Բայց նրանց ոչ մի բան չի օգնի: Զննարտութիւնը առանց ինձ էլ կը յաղթանակէ»:

Միւս փաստաբանը, Գեմանով, պատմել է թղթակցին. «Այսօր Լաբօրին ինձ ասաց. իմ թանգազան Գեմանով, դուք տեսնում էք, որ ես ընկած եմ անշարժ, որովհետև ամենավորձիկ շարժողութիւնն անգամ անասելի ցաւ է սպասուում: Ասացէ՛ք, ես աղապամ եմ: Զննչ որ

ազատված եւս ինչ չեմ ազատված, դուք առանց ինձ յազատեալեցէք, սա իմ ամենամոտիւրակն ջերմ ցանկութիւնն է, յայտնեցէք կապիտանին (Կրէյթուսին)։ Եւ Կեմանտ ասել է, որ նա ազատված է...

Ամբողջ տան մէջ վիշտ և արտասուներն են թաղաւորում։ Գրչերը եկան Լաբորիի հայրն ու մայրը։ Խեղճ ձերուները գիւղում էին իմացել, որ իրանց որդին մահացու վէրք է ստացել։ Նրանք իսկոյն ճանապարհ ընկան և բոլոր մեծ կայարաններում դողալով դուրս էին գալիս հարց ու փորձ անելու։ Երան բարի մարդիկ, որոնք Շարտրում ասացին թէ որդին զենքէ մեռել է, բայց մեռնում է, իսկ Վիտրէում, թէ նա այժմ երկի մեռել է։ Այդ դրութեան մէջ ձերուները համարեա կեսամեա հասան Վէնն և միայն իրանց թշուառ հարսից իմացան, որ զեռ կենդանի է։ Շարտրեակ հարիւրաւոր հեռագիրներ են գալիս քաղաքակրթ աշխարհի բոլոր անկիւններէ։ Պարիզում շփոթութիւնը և զայրոյթը անսովոր են։ Բոլոր թաղերի բանուորները պատգամաւորութիւններ են ուղարկում «Petite Republique» լրագրի խմբագրատուն, որ իմանան թէ ինչպէս է Լաբորիի առողջութիւնը։ Եթէ զգալիութիւն լինի, Լաբորի մեռնի, կարելի է լուրջ միջնադէպքեր և շփոթութիւններ սպասել։

Վէրքը, սակայն, վտանգաւոր չէր և Լաբորի, մի քանի օրից յետոյ, ոտքի վրա էր։

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍՍՈՒՅՑ

Պարիզ, յուլիսի 28-ին

